ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-27/25-I/INSTECONOM

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Մերի Գագիկի Մանուչարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 152 166 800 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների՝ մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,
2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.3.1 բացառել Ծրագրի ֆինանսավորման ծավալը նվազելու պատճառաբանությամբ արդյունավետ աշխատող գիտական աշխատողների աշխատանքային պայմանների վատթարացումը,
2.4.3.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից բացառել վարորդի աշխատավարձի և ծառայողական մեքենայի հետ կապված որևէ ծախս, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսեր,
2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,
2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,
2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,
2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության

պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 152 166 800 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ

ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15 Հ/հ՝ 900018005380 ՀՎՀՀ՝ 01506257 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ _____ Կ. S. (ստորագրություն)	Կազմակերպության տնօրեն՝ _____ Կ. S. (ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Մերի Գագիկի Մանուչարյան
Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն)	Մանուչարյան Մերի Գագիկի

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Մերի Գագիկի Մանուչարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 152 166 800 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

Կ. Տ.

(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սաղյան

Կազմակերպություն

տնօրեն՝

Կ.Տ.

(ստորագրություն)

Մերի Գագիկի Մանուչարյան

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	10
Այլ պարբերականում հրապարակում՝	70
Գրքեր, մենագրություններ՝	3
Գիտաժողովի նյութեր՝	35

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Հակոբյան Եվգենյա Արտաշեսի

Կ. Տ.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	149 507 825	29 901 565	37 376 956	37 376 956	44 852 348
2.	տնտեսական ծախսեր՝	1 658 975	331 795	414 743	414 743	497 694
3.	այլ ծախսեր՝	1 000 000	200 000	250 000	250 000	300 000
Ընդամենը՝		152 166 800	30 433 360	38 041 699	38 041 699	45 650 042

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Գեղամի Հակոբյան

Կ. Տ.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**1 658 975**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 158 975
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	200 000
4.	*կապի ծառայություն*	300 000
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**1 000 000**
1.	Այլ ծախսեր	1 000 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Գեղամի Հակոբյան

Կ. Տ.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-27/25-I/INSTECONOM պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)
B - ամիսների քանակ
C - աշխատաժամանակի ռեժիմ
D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Մանուչարյան Մերի Գագիկի	Տնօրեն	550 000	12	հիմնական	40	6 600 000
Խաչատրյան Լիանա Ալբերտի	փոխտնօրեն	450 000	12	հիմնական	40	5 400 000
Հակոբյան Կարինե Գեղամի	Գլխավոր հաշվապահ	380 000	12	հիմնական	40	4 560 000
Հակոբյան Եվգենյա Արտաշեսի	Գիտական քարտուղար	200 000	12	ներքին համատեղություն	20	2 400 000
Սուվարյան Յուրի Միքայելի	խորհրդական	200 000	12	համատեղություն	20	2 400 000
Մարկոսյան Անահիտ Խաչատուրի	հրատարակչության պատասխանատու	250 000	12	հիմնական	40	3 000 000
Ասատրյան Գոհար Արմանի	կադրերի բաժնի ղեկավար	325 000	12	հիմնական	40	3 900 000
Մանուկյան Վլադիկ Լևոնի	ընդհանուր բաժնի վարիչ	270 000	12	հիմնական	40	3 240 000
Ավագյան Նարինե Հրանտի	գրադարանավար	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բաբայան Մարլենա Մկրտիչի	օպերատոր	77 500	3	հիմնական	20	232 500
Առաքելյան Անահիտ Միշայի	գործավար - քարտուղար	195 000	12	հիմնական	40	2 340 000
Կարապետյան Հասմիկ Հենրիկի	հավաքարար	195 000	12	հիմնական	40	2 340 000
Մանուկյան Արտաշես Մուշեղի	տնտեսական աշխատող	140 000	12	հիմնական	30	1 680 000
Ղազարյան Կարեն Կոդլեբի	պահակ	185 000	12	հիմնական	40	2 220 000
Խաչատրյան Արա Գառնիկի	Վարորդ	200 000	3	հիմնական	40	600 000
Ալոյան Հասմիկ Արթուրի	օպերատոր	155 000	12	հիմնական	40	1 860 000
Գիտական անձնակազմ						
Բաժանմունք՝ Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ						
Խումբ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականության հայեցակարգը և հիմնական ուղղությունները						
Ասատրյան Հովհաննես Սիմոնի	Խմբի ղեկավար	410 068	12	հիմնական	40	4 920 816
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի	Ավագ գիտաշխատող	171 633	12	համատեղություն	20	2 059 596
Ներսիսյան Կարեն Արմոյի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Մակարյան Աննա Ռուզվելտի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Խաչատրյան Աշոտ Պողոսի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Վարժապետյան Արշակ Հարությունի	Կրտսեր գիտաշխատող	52 581	12	համատեղություն	10	630 972
Նալբանդյան Հմայակ Ռոմիկի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900

Բաժանմունք Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ						
Մանուչարյան Մերի Գագիկի	Ղեկավար	238 435	12	ներքին համատեղություն	20	2 861 220
Խումբ Շրջանաձև տնտեսության մոդելի հայեցակարգի ներդրումը որպես ՀՀ պարենային անվտանգության բարձրացման անհրաժեշտություն						
Մատինյան Ալվարդ Գարեգինի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Խաչատրյան Լիանա Ալբերտի	Գիտաշխատող	137 902	12	ներքին համատեղություն	20	1 654 824
Ազատյան Լիանա Սամվելի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ոսկանյան Գոհար Վազգենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Քոչարյան Ծովինար Վրույրի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մուրադյան Մերի Համբարձումի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Խումբ Գիտության զարգացման ռազմավարությունը որպես ՀՀ տնտեսությյան կայուն զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն նախապայման						
Հակոբյան Եվգենյա Արտաշեսի	Խմբի ղեկավար	410 068	12	հիմնական	40	4 920 816
Մինասյան Մանուշ Մաղլեստի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Շահինյան Տաթևիկ Վազգենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Միքայելյան Միքայել Վարազդատի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Պետրոսյան Դավիթ Արմենակի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Հարությունյան Անուշ Ալեքսեյի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Շամխալովա Էլինա Սերգեի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	համատեղություն	20	1 261 956
Բաժանմունք Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ						
Պողոսյան Շողեր Պյոտրի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Խումբ Արհեստական բանականության և թվայնացման նվաճումների ներդրումը որպես ՀՀ տնտեսության տեխնոլոգիական զարգացման կարևորագույն գործոն						
Բեգլարյան Լիլիկ Մխիթարի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Վարդանյան Գոհար Վազգենի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ըռքոյան Արսեն Սլավիկի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մուրադյան Լիլիթ Մուրադի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Սարգսյան Անուշ Տիգրանի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Պողոսյան Մարիամ Վարդանի	Կրտսեր գիտաշխատող	105 163	11	հիմնական	20	1 156 793
Բաժանմունք Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն						
Սարինյան Ռոբերտ Ներսեսի	Ղեկավար	357 652	12	հիմնական	30	4 291 824
Խումբ Տնտեսական մտքի արդի զարգացումները և տնտեսական վարքագծի փոփոխության միտումները թվայնացման պայմաններում						
Գաբրիելյան Բելլա Վալերիի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Պապիկյան Ստեփան Ռաֆիկի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Հարությունյան Գևորգ Արամի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
	Կրտսեր գիտաշխատող			համատեղություն		

Հարությունյան Լիանա Կառլենի		105 163	12		20	1 261 956
Մանուկյան Գրիգոր Թաթուլի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Դալլաքյան Սվետլանա Արկադիի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հովնանյան Լևոն Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	52 581	12	հիմնական	10	630 972
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						149 507 825

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (ԱԱՀ)

Կ. Տ.